ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 4.1-26

*1 Երբ Հիսուսն իմացավ, որ փարիսեցիները լսել են, թե ինքն ավելի շատ աշակերտներ է ձեռք բերում
և մկրտում, քան Հովհաննեսը, 2 (թեև Հիսուսն ինքը չէր մկրտում, այլ նրա աշակերտները.) 3 Թողեց
Հուդայի երկիրն ու կրկին Գալիլեա եկավ: 4 Եվ պետք է Սամարիայի միջով անցներ: 5 Արդ նա
Սամարիայի մի քաղաք եկավ, որ Սյուքար էր կոչվում, մոտիկ այն ագարակին, որ Հակոբը տվել էր իր
որդի Հովսեփին: 6 Հիսուսը, ճանապարհից հոգնած, նստեց այդ աղբյուրի մոտ: Վեցերորդ ժամն էր:*

I. ԱՅՆ ՎԱՅՐԸ, ՈՐՏԵՂՈՎ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵՐ ՀԻՍՈՒՍԸ:

*4 Եվ ՊԵՏՔ Է Սամարիայի միջով անցներ: 5 Արդ նա Սամարիայի մի քաղաք եկավ, որ Սյուքար
էր կոչվում, մոտիկ այն ագարակին, որ Հակոբը տվել էր իր որդի Հովսեփին:*

Սամարիան Իսրայելի պատմության կենտրոնական կետերից մեկն էր և հիշատակվում է շուրջ 106 անգամ Հին Կտակարանում և 11 անգամ Նոր Կտակարանում:

- ***ԻՆՉՈ՞Ւ ԷՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՐ ՀԻՍՈՒՍՆ ԱՆՑՆԵՐ ՍԱՄԱՐԻԱՅԻ ՄԻՋՈՎ:***

Հեսու 24.32 – Հովսեփի ոսկորները, որ Իսրայելի որդիները հանել էին Եգիպտոսից, թաղեցին Սյուքեմում՝ ագարակի այն մասում, որ Հակոբը գնել էր Սյուքեմի հոր՝ Եմորի որդիներից հարյուր կեսիթայով, և դա Հովսեփի որդիների ժառանգությունը եղավ:

Վատ ընդունելություն Սամարիայի մի գյուղում:

*Ղուկաս 9.51-56 – 53 Բայց Սամարացիները նրան չընդունեցին, որովհետև նա Երուսաղեմ
էր ուղղվում: 54 Նրա աշակերտները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, այդ տեսնելով, ասացին.
Տե՛ր, ուզո՞ւմ ես, որ ասենք՝ երկնքից կրակ իջնի ու դրանց ոչնչացնի: 55 Իսկ նա դարձավ,
սաստեց նրանց: Եվ ուրիշ գյուղ գնացին:*

Հով. 4.39-41 – Արդ երբ սամարացիները նրա մոտ եկան, խնդրեցին նրան, որ իրենց հետ մնա, և նա երկու օր այնտեղ մնաց:

Այս պատմությունը Հովհաննեսի համար շատ անձնական էր, և այդ պատճառով նա արձանագրել է իր ավետարանում:

Հով. 4.27 – Եվ այդժամ եկան նրա աշակերտները ու զարմանում էին, որ նա կնոջ հետ էր խոսում, բայց ոչ ոք չասաց՝ Ի՞նչ ես ուզումե կամ,Դրա հետ ի՞նչ ես խոսում:

Ավետարանի Քարոզությունը Սամարիայում:

Գործք Առաքելոց 8.14-15 – Երբ Երուսաղեմում գտնվող առաքյալները լսեցին, որ Սամարիան ընդունել է Աստծու խոսքը, նրանց մոտ ուղարկեցին Պետրոսին ու Հովհաննեսին, որոնք այնտեղ իջան ու նրանց համար աղոթեցին, որպեսզի Սուրբ Հոգին ստանան.

- ***ԵՐԲԵՄՆ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ ԼԻՆՈՒՄ ԵՆ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՊԱՀԵՐ, ՈՐՈՆՑ ՄԻՋՈՎ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵՆՔ:***

7 Սամարացի մի կին եկավ ջուր հանելու: Հիսուսը նրան ասաց. Ինձ ջո՛ւր տուր՝ խմեմ. 8 քանի որ
նրա աշակերտները քաղաք էին գնացել ուտելիք գնելու: 9 Սամարացի կինը նրան ասաց. Դու, որ
հրեա ես, ինչպե՞ս ես ինձանից՝ Սամարացի կնոջից, խմելու ջուր ուզում. որովհետև հրեաները
Սամարացիների հետ չէին շփվում: 10 Հիսուսը պատասխանեց նրան ու ասաց. Եթե իմանայիր
Աստծու պարգևը, և թե ո՞վ է նա, որ քեզ ասում է՝ "Ինձ խմելու ջո՛ւր տուր", ապա դո՛ւ նրանից
կխնդրեիր, նա էլ քեզ կենդանի ջուր կտար: 11 Կինը նրան ասաց. Տե՛ր, դու նույնիսկ դույլ չունես,
իսկ ջրհորը խորն է. արդ կենդանի ջուրը որտեղի՞ց ունես: 12 Մի՞թե դու ավելի մեծ ես, քան մեր
հայր Հակոբը, որ այս ջրհորը մեզ տվեց. ինքը, իր որդիներն ու հոտերը խմել են սրանից: 13
Հիսուսը պատասխանեց նրան ու ասաց. Ով այդ ջրից խմի, կրկին կծարավի, բայց ով խմի այն
ջրից, որ ես եմ տալու նրան, նա հավիտյան չպիտի ծարավի: 14 Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու
եմ, նրա մեջ ջրի աղբյուր կդառնա, որ հավիտենական կյանքի համար կբխի: 15 Կինը նրան
ասաց. Տե՛ր, տո՛ւր ինձ այդ ջրից, որ չծարավեմ և չգամ այստեղ ջուր հանելու:

- ***Ահա և հետաքրքիրն այն է, որ այս պատմության մեջ Հիսուսը խոսեց 7 անգամ, իսկ սամարացի կինը՝ 6 անգամ:Առաջին բանը, որ Հիսուսը խնդրեց կնոջից, «Ինձ ջո՛ւր տուր՝ խմեմ»:***

II. ՄԻԱՅՆ ՀԻՍՈՒՍՆ Է ԿԵՆԴԱՆԻ ՋՈՒՐԸ, ՈՐ ԼՑՆՈՒՄ Է ՄԵՐ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ:

- ***Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը «Կենդանի ջուր» ասելով:***

Հովհաննէս 7.37-39-ըտալիս է լրացուցիչ պարզություն:

Եվ տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր և աղաղակում էր՝ ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: Ինչպես Գիրքն է ասում. "Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն"»: Նա այս ասաց՝ նկատի ունենալով Հոգուն, որն ընդունելու էին նրան հավատացողները, որովհետև Սուրբ Հոգին դեռևս չունեին, քանի որ Հիսուսը դեռ փառավորված չէր:

Խաչի վրա Հիսուսի ավարտած գործով, յուրաքանչյուր նոր ուխտի հավատացյալ, ով անկեղծորեն ապաշխարում է և հռչակում Հիսուսին որպես իր Տեր և Փրկիչ, ապա Աստծո նշանակած ճիշտ ժամանակին ստանում է կենդանի ջուր, այսինքն՝ Նրա Սուրբ Հոգու բնակությունը մարդու մեջ (տես 1 Հովհաննես 5.1):

Ա Հովհաննես 5.1 – Ամեն ոք, ով հավատում է, որ Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված, և ամեն ոք, ով սիրում է ծնունդ տվողին, նրանից ծնվածին էլ է սիրում:

- ***Ամենօրյա մարտահրավեր. Մարդիկ միշտ փնտրում են այնպիսի բաներ, որոնք կլրացնեն իրենց սրտում գտնվող դատարկությունը - այն դատարկություն, որը կարող է լրացնել միայն Հիսուսը: Այդ բաները կարող են ներառել հարաբերություններ, զբաղվածություն, ալկոհոլ, թմրանյութեր, և այլն:***

5 Կինը նրան ասաց. Տե՛ր, տո՛ւր ինձ այդ ջրից, որ չծարավեմ և չգամ այստեղ ջուր հանելու:

III. ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ, ԵՐԲ ՀԱՆԴԻՊԱՈՒՄ ԵՍ ՀԻՍՈՒՍԻՆ:

16 Հիսուսը նրան ասաց. Գնա ամուսնուդ կանչի՛ր ու այստե՛ղ արի: 17 Կինը պատասխանեց եւ ասեց. Ես ամուսին չունեմ. Հիսուսը նրան ասաց. Լավ ասացիր՝ "Ամուսին չունեմ". 18 Որովհետեւ դու հինգ ամուսին ես ունեցել, և նա, ում հիմա ունես, քո ամուսինը չէ. դա ճիշտ ասացիր:

- ***Հանդիպում Հիսուսի հետ.***

  Հաճախ չի լինի այն, ինչ մենք ակնկալում էինք. . .

  Բացահայտվում են մեր թույլ կողմերը և հասնում խնդրի իրական արմատին:

  19 Կինը նորան ասաց. Տե՛ր, տեսնում եմ, որ դու մարգարե ես: 20 Մեր հայրերն այս լեռան վրա երկրպագություն են արել, իսկ դուք ասում եք, թե Երուսաղեմում է այն տեղը, որտեղ պետք է երկրպագություն անել: 21 Հիսուսը նրան ասաց. Կի՛ն, հավատա՛ ինձ, որ ժամանակը կգա, երբ ո՛չ այս լեռան վրա, ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեք Հորը: 22 Դուք երկրպագում եք նրան, ում չգիտեք. մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք. որովհետև փրկությունը Հրեաներից է: 23 Բայց ժամանակը կգա, և արդեն եկել է, երբ ճշմարիտ երկրպագողները կերկրպագեն Հորը հոգով ու ճշմարտությամբ, որովհետև Հայրն իրեն այդպիսի երկրպագողներ է ուզում: 24 Աստված Հոգի է, ու նրան երկրպագողները պետք է հոգով ու ճշմարտությամբ երկրպագեն: 25 Կինն ասեց նորան. Կինը նրան ասաց. Գիտեմ, որ գալու է Մեսիան (որ Քրիստոս է կոչվում). երբ նա գա, մեզ ամեն ինչ կպատմի: 26 Հիսուսը նրան ասաց. Ես եմ՝ քեզ հետ խոսողը:

  Հիսուսինն է վերջին խոսքը:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ